Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2011» ինդեքս

2010թ. նոյեմբերի 4-ին Համաշխարհային բանկը հրապարակել է իր ամենամյա «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2011» հետազոտությունը, որում ուսումնասիրվել և գնահատվել է աշխարհի 183 երկրներում գործարար միջավայրը և գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը: Այս հետազոտության նպատակն է վերլուծել տնտեսական գործունեության կենսապարբերաշրջանին (life cycles) վերաբերող կանոնակարգերը և բացահայտել աշխարհի տարբեր երկրներում գործարար միջավայրը կարգավորող այն ոլորտները, որտեղ առկա են գործարարության իրականացման լուրջ խոչընդոտներ, և անհրաժեշտ են լուրջ բարեփոխումներ:

Նշենք, որ գործարարությամբ զբաղվելու դյուրինությամբ աշխարհի 183 տնտեսությունների առաջին տասնյակում են Սինգապուրը, Հոնկոնգը, Նոր Զելանդիան, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը, Դանիան, Կանադան, Նորվեգիան, Իռլանդիան և Ավստրալիան, իսկ վերջին տասնյակում են՝ Արևելյան Թիմորը, Կոնգոյի Ժողովրդական Հանրապետությունը, Գվինեա-Բիսաուն, Կոնգոն, Սան Տոմեի և Պրինսիպիի Հանրապետությունը, Գվինեան, Էրիթրեան, Բուրունդին, Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունը և Չադը:

«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2011» հետազոտության մեջ ուսումնասիրվել են գործարար միջավայրի կարգավորման ինը ոլորտներ՝ ***գործարարություն սկսելը (գրանցելը), շինարարական թույլտվություններ ստանալը, սեփականության գրանցումը, վարկի ստացումը, ներդրողների պաշտպանությունը, հարկերի վճարումը, սահմանային առևտրի դյուրինությունը, պայմանագրերի կիրարկումը, գործարարության փակումը (լուծարումը)***: Նշված ոլորտների համար հաշվարկվել են առանձին ենթաինդեքսներ, որոնց պարզ թվաբանական միջինը կազմում է ***«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը»*** ամփոփ ինդեքսը տվյալ երկրի համար: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2011» հետազոտության մեջ օգտագործվել են 2009 թ. հունիս - 2010 թ. հունիս ժամանակահատվածի տվյալները:

Ենթաինդեքսների հաշվարկման համար հիմք է հանդիսանում հարցումների միջոցով ստացված տեղեկատվությունը, որը, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում է համապատասխան ոլորտը կարգավորող օրենքների կամ օրենսդրական ակտերի դրույթների հիման վրա: Ընդ որում՝ հարցումների համար անհրաժեշտ հարցաթերթիկները կազմվում են Համաշխարհային բանկի փորձագետների կողմից՝ երկրների գործարար միջավայրը կարգավորող օրենսդրական դաշտը ուսումնասիրելուց հետո:

<u>Հայաստանի գնահատականները</u>. Հայաստանի ինդեքսը Համաշխարհային բանկի կողմից գնահատվում է 2004 թվականից, և այս ողջ ընթացքում գործարար միջավայրի կարգավորման ոլորտում գրանցվել են 18 բարեփոխումներ: Մասնավորապես՝ ***գործարարություն սկսելու ոլորտում*** 2 բարեփոխում (2007թ. և 2010թ. հետազոտություններում), ***շինարարական թույլտվություններ ստանալու ոլորտում*** 2 բարեփոխում (2007թ. և 2009թ.), ***աշխատողներ վարձելու ոլորտում*** 1 բարեփոխում (2006թ.), ***սեփականության գրանցման ոլորտում*** 1 բարեփոխում (2007թ.), ***վարկեր ստանալու ոլորտում*** 5 բարեփոխում (2005թ., 2006թ., 2007թ., 2008թ., 2010թ.), ***սահմանային առևտրի ոլորտում*** 3 բարեփոխում (2008թ., 2010թ. և 2011թ.), ***պայմանագրերի կիրարկման ոլորտում*** 2 բարեփոխում (2005թ. և 2009թ.), ***գործարարությունը փակելու ոլորտում*** 2 բարեփոխում (2005թ. և 2008թ.): 2004-2011թթ. հետազոտություններում ոչ մի բարեփոխում չի գրանցվել ներդրողների պաշտպանության և հարկերի վճարման ոլորտներում:

«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2011» ինդեքսով Հայաստանը աշխարհի 183 երկրների թվում 48-րդն է, որը վատացում է նախորդ տարվա 44-րդի համեմատ: Ընդ որում, նախորդ տարվա համեմատ Հայաստանի դիրքի վատացումը պայմանավորվել է ***գործարարություն սկսելու***, ***շինարարական թույլտվություններ ստանալու***, ***սեփականության***

գրանցման, ***վարկերի ստացման***, ***ներդրողների պաշտպանության***, ***հարկերի վճարման***, ***պայմանագրերի կիրարկման*** և ***գործարարությունը փակելու ոլորտները*** գնահատող ենթաինդեքսների հարաբերական վատացմամբ (տե՛ս աղյուսակ 2): Հայաստանի դիրքը աշխարհի 183 երկրների թվում 21-ով բարելավվել է միայն ***սահմանային առևտրի ոլորտում*** իրականացված բարեփոխումների շնորհիվ:

Ներկայացնենք վերոնշյալ ենթաինդեքսներից յուրաքանչյուրի փոփոխությունը և դրա պատճառները:

2011 թ. ***գործարարություն սկսելը*** ենթաինդեքսի գծով գրանցել է հետընթաց՝ նախորդ տարվա 20-րդ տեղի փոխարեն Հայաստանը ներկայումս գրավում է 22-րդ տեղը՝ աշխարհի 183 երկրների թվում: Այս հետընթացը պայմանավորված է այն հանգամանքով, որ, ըստ Համաշխարհային բանկի փորձագետների, նախորդ տարվա համեմատ Հայաստանում մեծացել է գործարարության գրանցման վրա կատարվող ծախսը. նախորդ տարվա 2.6%-ի փոխարեն 2011թ.-ի համար այն կազմել է 3.1% (տե՛ս աղյուսակ 2): Սակայն այս ցուցանիշի վատացման պատճառը Հայաստանում գործարարության գրանցման վրա կատարվող ծախքի բացարձակ գումարի մեծացումը կամ այդ ոլորտում վատացումը չէ: Բանն այն է, որ, ըստ մեթոդաբանության, գործարարության գրանցման վրա կատարվող ծախքը գնահատվում է որպես 1 շնչի հաշվով եկամտի տոկոս: Եվ քանի որ 2009թ.-ին, պայմանավորված ՀՆԱ-ի աննախադեպ անկմամբ, գրանցվել է նաև 1 շնչի հաշվով եկամտի զգալի նվազում, հետևաբար և այս ցուցանիշը մեծացել է 0.5%-ային կետով:

Նույնը վերաբերում է նաև ***շինարարական թույլտվություններ ստանալու*** ենթաինդեքսի գծով Հայաստանի հետընթացին. նախորդ տարվա 72-րդ տեղի փոխարեն Հայաստանը ներկայումս գրավում է 78-րդ տեղը: Այս հետընթացը նույնպես պայմանավորված է շինարարական թույլտվություններ ստանալու համար անհրաժեշտ ծախսի ավելացմամբ. նախորդ տարվա 104.9%-ի փոխարեն 2011թ.-ի համար այն կազմել է 122.7% (տե՛ս աղյուսակ 2): Ըստ մեթոդաբանության, այս ցուցանիշը նույնպես հաշվարկվում է որպես 1 շնչի հաշվով եկամտի տոկոս և, հետևաբար, պայմանավորված է 2009թ.-ին ՀՆԱ-ի կտրուկ նվազումով:

Սեփականության գրանցումը ենթաինդեքսի գծով Հայաստանում գրանցվել է հետընթաց 1 տեղով. նախորդ տարվա 4-րդ տեղի փոխարեն Հայաստանը ներկայումս գրավում է 5-րդ տեղը: Դա պայմանավորված է նախորդ տարվա համեմատ սեփականության գրանցման ընթացակարգերի վրա ծախսվող օրերի թիվը՝ 3-ով ավելացմամբ (տե՛ս աղյուսակ 2):

Վարկի ստացումը ենթաինդեքսի գծով Հայաստանը նախորդ տարվա 44-րդ տեղի փոխարեն ներկայումս գրավում է 46-րդ տեղը, որը կիսում է աշխարհի այլ 18 երկրների՝ Ադրբեջանի, Բելգիայի, Բոթսվանայի,Չեխիայի, Սալվադորի, Ֆիջիի, Ֆրանսիայի, Գանայի, Լիտվայի, Մակեդոնիայի, Մեքսիկայի, Իռլանդիայի, Նորվեգիայի, Սաուդյան Արաբիայի, Շրի Լանկայի, Սվազիլենդի, Ուգանդայի և Ուրուգվայի հետ: Այս ենթաինդեքսի հիմքում ընկած ցուցանիշներից և ոչ մեկը փոփոխություն չի կրել նախորդ տարվա համեմատ, այլ ընդհակառակը՝ զգալիորեն մեծացել է պետական և մասնավոր ռեգիստրի ծածկույթը (տե՛ս աղյուսակ 2), հետևաբար՝ ***վարկի ստացումը*** ենթաինդեքսի գծով Հայաստանի հետընթացը պայմանավորված է այս ոլորտում Հայաստանի համեմատ աշխարհի այլ երկրների արագ առաջընթացով:

Ներդրողների պաշտպանություն ենթաինդեքսի գծով Հայաստանը գրանցել է հետընթաց 1 տեղով, որը, ինչպես և ***վարկի ստացումը*** ենթաինդեքսի դեպքում, պայմանավորվել է այս ոլորտում Հայաստանի համեմատ աշխարհի այլ երկրների արագ առաջընթացով: Ինչպես երևում է աղյուսակ 2-ում, ներդրողների պաշտպանություն ենթաինդեքսի հիմքում ընկած ցուցանիշներից և ոչ մեկի մակարդակը նախորդ տարվա համեմատ չի փոխվել:

Հարկերի վճարում ենթաինդեքսի գծով Հայաստանը գրանցել է հետընթաց 2 տեղով, որը ինչպես և ***վարկի ստացում*** և ***ներդրողների պաշտպանություն*** ենթաինդեքսների դեպքում, պայմանավորվել է այս ոլորտում Հայաստանի համեմատ աշխարհի այլ երկրների արագ առաջընթացով:

Սահմանային առևտրի դյուրինությունը ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքը բարելավվել է 21-ով՝ նախորդ տարվա 103-րդ տեղի փոխարեն Հայաստանը ներկայումս գրավում է 82-րդ տեղը: Նախորդ տարվա համեմատ բարելավվել են այս ենթաինդեքսի հիմքում ընկած բոլոր ցուցանիշները. կրճատվել է արտահանման/ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթերի քանակը և ժամանակը, նվազել է արտահանման/ներմուծման ծախսը:

Պայմանագրի կիրարկում ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքը վատացել է 1 տեղով. նախորդ տարվա 62-րդ տեղի փոխարեն Հայաստանը ներկայումս գրավում է 63-րդ տեղը: Այս հետընթացը պայմանավորվել է ոչ թե պայմանագրի կիրարկման ոլորտում Հայաստանի ցուցանիշների վատացմամբ, այլ Հայաստանի համեմատ աշխարհի մյուս երկրների արագ առաջընթացով:

Գործարարության փակումը ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքը վատացել է 5 տեղով. նախորդ տարվա 49-րդ տեղի փոխարեն Հայաստանը ներկայումս գրավում է 54-րդ տեղը, որը պայմանավորվել է այս ենթաինդեքսի հիմքում ընկած ցուցանիշներից մեկի՝ սնանկության գործընթացի արդյունքում մարված պարտքերի (փոխհատուցման) չափի 1.2 ցենտով նվազմամբ:

Այսպիսով, նախորդ տարվա համեմատ **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը-2011»** ինդեքսի հիմքում ընկած ինը ենթաինդեքսներից՝

- ***սահմանային առևտրի դյուրինություն*** ենթաինդեքսը զգալիորեն բարելավվել է շնորհիվ այդ ոլորտում իրականացված լայնածավալ բարեփոխումների,
- ***վարկի ստացում***, ***ներդրողների պաշտպանություն***, ***հարկերի վճարում*** և ***պայմանագրի կիրարկում*** ենթաինդեքսները վատացել են ոչ թե Հայաստանում այդ ոլորտների հետընթացով, այլ Հայաստանի համեմատ աշխարհի մյուս երկրների ավելի արագ առաջընթացով պայմանավորված,
- ***գործարարություն սկսելու*** և ***շինարարական թույլտվություններ*** ստանալու ենթաինդեքսների վատացել են պայմանավորված 2009թ.-ին Հայաստանում 1 շնչին ընկնող եկամտի զգալի նվազմամբ,
- ***սեփականության գրանցում*** ենթաինդեքսը վատացել է պայմանավորված նախորդ տարվա համեմատ սեփականության գրանցման ընթացակարգերի վրա ծախսվող օրերի թվի ավելացմամբ,
- ***գործարարության փակումը*** ենթաինդեքսը վատացել է պայմանավորված սնանկության գործընթացի արդյունքում մարված պարտքերի (փոխհատուցման) չափի նվազմամբ:

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Համաշխարհային բանկի կողմից հրապարակված «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը-2011» հետազոտության մեջ ենթաինդեքսների գնահատման մեթոդաբանության ուսումնասիրման, ինչպես նաև աղյուսակում 1-ում ներկայացված Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի 2011թ. ինդեքսների համեմատական վերլուծության արդյունքում նկատում ենք, որ Հայաստանը.

- գերազանցում է իր հարևան երկրներին **«Գործարարության փակում (լուծարում)»** ոլորտում,
- զիջում է իր հարևան երկու երկրներին **«Գործարարություն սկսելը (գրանցելը)»**, **«Ներդրողների պաշտպանություն»**, **«Հարկերի վճարում»** և **«Պայմանագրերի կիրարկում»** ոլորտներում,
- զիջում է միայն Վրաստանին **«Շինարարական թույլտվություններ ստանալը»**, **«Սեփականության գրանցում»**, **«Վարկի ստացում»** և **«Սահմանային առևտրի դյուրինություն»** ոլորտներում:

Հարավկովկասյան տարածաշրջանի տեսակետից հարկ ենք համարում քննարկել ***հարկերի վճարում, ներդրողների պաշտպանություն*** և ***սահմանային առևտուր*** ենթաինդեքսները:

Հարկերի վճարում ենթաինդեքսի ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 159-րդ տեղը՝ աշխարհի 183 երկրների թվում և զգալիորեն զիջում է թե՛ Վրաստանին և թե՛ Ադրբեջանին: Այս ենթաինդեքսի գծով Հայաստանի և Վրաստանի ցուցանիշները նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել, սակայն Ադրբեջանը գրանցել է առաջընթաց՝ նախորդ տարվա 107-րդ

տեղից հասնելով 103-րդ տեղը (աշխարհի 183 երկրների շարքում): Ադրբեջանում հարկային վարչարարության բարեփոխումների արդյունքում 4-ով կրճատվել է հարկային վճարումների տարեկան թիվը և 70 ժամով՝ հարկերի վճարման համար ծախսվող ժամանակը: Այսպիսով, ներկայումս Հայաստանում ձեռներեցները կատարում են հարկերի տարեկան 50 վճարում (Վրաստանում՝ 18, Ադրբեջանում՝ 18)՝ ծախսելով 581 ժամ (Վրաստանում՝ 387, Ադրբեջանում՝ 306) և վճարում են իրենց համախառն շահույթի 40.7%-ը (Վրաստանում՝ 15.3%, Ադրբեջանում՝ 40.9%):

Ներդրողների պաշտպանություն ենթաինդեքսի ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 93-րդ տեղը՝ աշխարհի 183 երկրների թվում և զգալիորեն զիջում է թե՛ Վրաստանին և թե՛ Ադրբեջանին (տե՛ս աղյուսակ 1): Հայաստանում բարձր է «Սեփականատերերի դատական հայցերի դյուրինության ինդեքսը», սակայն Վրաստանի և Ադրբեջանի համեմատ ցածր է «Տնօրենի պարտավորությունների աստիճանի ինդեքս»-ը, ինչը նշանակում է, որ, չնայած Հայաստանում սեփականատերերը հեշտությամբ կարող են դատական հայց ներկայացնել տնօրենի կողմից իրավասությունների չարաշահման դեպքում, սակայն գործադիր տնօրենի պատասխանատվության աստիճանը դեռևս ցածր է: Հայաստանում՝ Վրաստանի և Ադրբեջանի համեմատ ցածր է նաև «Թափանցիկության չափի ինդեքսը»:

Իսկ ինչ վերաբերում է ***սահմանային առևտուր*** ենթաինդեքսի գնահատականին, հարկ է նշել, որ չնայած զգալի բարեփոխումներին, Հայաստանը իր 82-րդ տեղով դեռևս զգալիորեն զիջում է Վրաստանին, որը զբաղեցնում է 35-րդ տեղը: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Վրաստանի համեմատ Հայաստանում ավելի շատ փաստաթղթեր, ժամանակ (օր) և դրամական միջոցներ են ծախսվում արտահանման և ներմուծման ստանդարտ գործընթացների վրա:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների շարքում գործարար միջավայրի կարգավորմամբ Հայաստանը զիջում է Մակեդոնիային, Սլովակիային, Սլովենիային և Հունգարիային, իսկ նախկին խորհրդային երկրների շարքում՝ Վրաստանին, մերձբալթյան երկրներին և Ղրղզստանին (տե՛ս աղյուսակ 3):

Հայաստանի 2004-2011թթ. ամփոփ ինդեքսների, ենթաինդեքսների և դրանք կազմող ցուցանիշների դինամիկան, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում գործարարությամբ զբաղվելու դյուրինության համեմատական նկարագիրը ներկայացված են 1-3 աղյուսակներում:

Հարավկովկասյան երկրների «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2011 թ.» ինդեքսի առանձին ցուցանիշների համեմատությունը

Աղյուսակ 1

Ո ւ ղ ր տ ւ ե ր ը	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան
Գործարարությամբ զբաղվելու դյուրինություն (դիրքը աշխարհի 183 երկրների շարքում)	**48**	**12**	**54**
Գործարարություն սկսելը (գրանցելը)	22	8	15
Շինարարական թույլտվություններ ստանալը	78	7	160
Աշխատողների վարձումը[1]	---	---	---
Սեփականության գրանցումը	5	2	10
Վարկի ստացումը	46	15	46
Ներդրողների պաշտպանությունը	93	20	20
Հարկերի վճարումը	159	61	103
Սահմանային առևտրի դյուրինությունը	82	35	177
Պայմանագրերի կիրարկումը	63	41	27
Գործարարության փակումը (լուծարումը)	54	105	88
1 շնչին բաժին ընկնող ՀԱԱ (2009 թ., ԱՄՆ դոլար)	3100	2530	4840
Բնակչություն (2009 թ., միլիոն մարդ)	3.1	4.3	8.8

[1] **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2011թ.»** զեկույցում **«Աշխատողների վարձումը»** ենթաինդեքսը հանվել է և ընդհանուր ինդեքսի գնահատման ժամանակ այլևս հաշվի չի առնվում:

Հայաստանի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2011» ինդեքսի առանձին ցուցանիշների համեմատությունը (2004-2011 թթ.)

Աղյուսակ 2

Տնտեսություն		Հայաստան							
	Տարի	*2011*	*2010*	*2009*	*2008*	*2007*	2006	*2005*	*2004*
Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը	երկրների թիվը	183	183	181	178	175	155	145	145
	երկրի դիրքը	48	44	50	41	34	37	...	...
Գործարարություն սկսելը (գրանցելը)	Տեղը	22	20	65	49	46	48	...	...
	Ընթացակարգեր (քանակ)	6	6	9	9	9	10	10	10
	Ժամանակ (օրեր)	15	15	18	18	18	19	19	19
	Ծախս (1 շնչի հաշվով եկամտի տոկոս)	3.1	2.6	3.6	4.8	5.1	6.1	7	8.4
	Նվազագույն կապիտալ (1 շնչի հաշվով եկամտի տոկոս)	0.0	0.0	2.3	3.1	3.3	4	4.5	5.4
Շինարարական թույլտվություններ ստանալը	Տեղը	78	72	75	73	36	70	...	...
	Ընթացակարգեր (քանակ)	20	20	20	20	20	22	...	...
	Ժամանակ (օրեր)	137	137	149	149	149	184.0	...	...
	Ծախս (1 շնչի հաշվով եկամտի տոկոս)	122.7	104.9	113.0	152.0	563.1	544.9	...	...
Սեփականության գրանցումը	Տեղը	5	4	6	2	2	6	...	...
	Ընթացակարգեր (քանակ)	3	3	3	3	3	4	4	...
	Ժամանակ (օրեր)	7	4	4	4	4	6	6	...
	Ծախս (սեփականության արժեքի տոկոս)	0.3	0.3	0.3	0.4	0.4	0.5	0.6	...
Վարկի ստացումը	Տեղը	46	44	41	25	65	76	...	...
	Օրինական իրավունքների ինդեքսի ամրություն (0-10)	6	6	6	6	6	5	5	...
	Վարկային տեղեկատվության ինդեքսի խորություն (0-6)	5	5	5	5	3	3	...	...
	Պետական ռեգիստրի ծածկույթ (տոկոս՝ չափահաս բնակչությունից)	16.9	4.4	2.6	2.8	1.5	2.6	...	...
	Մասնավոր բյուրոյի ծածկույթ (տոկոս՝ չափահաս բնակչությունից)	38.3	34.5	24.4	13.5	0.0	0	0.0	...
Ներդրողների պաշտպանությունը	Տեղը	93	92	88	84	83	81		
	Թափանցիկության չափի ինդեքս (0-10)	5	5	5	5	5	5	...	...
	Տնօրենի պատասխանատվության չափի ինդեքս (0-10)	2	2	2	2	2	2	...	...
	Սեփականատերերի դատական հայցերի դյուրինության ինդեքս (0-10)	8	8	8	8	8	8.0	...	...
	Ներդրողների պաշտպանության ամրության ինդեքս (0-10)	5.0	5.0	5.0	5.0	5.0	5	...	...

Հարկերի վճարումը	**Տեղը**	**159**	**157**	**151**	**147**	**148**	**147**	...	...
	Վճարումներ (տարեկան՝ քիվ)	50	50	50	50	50	50	...	...
	Ժամանակ (տարեկան՝ ժամեր)	581	581	581	581	580	580	...	...
	Շահութահարկ, եկամտահարկ (%)	16.6	...	..	..	...	...	...	...
	Սոցապ և կենսաթոշակային վճարումներ (%)	23	...	..	..	...	...	...	...
	Այլ հարկեր (%)	1.1	...	..	..	...	...	...	...
	Ընդհանուր հարկերի դրույքաչափ (շահույթի տոկոս)	40.7	40.7	40.7	40.7	38.7	38.7	...	...
Սահմանային առևտրի դյուրինություն	**Տեղը**	**82**	**103**	**136**	**131**	**119**	**113**	...	...
	Արտահանման համար անհրաժեշտ փաստաթղթեր (քանակ)	3	5	6	6	6	6	...	...
	Արտահանման համար անհրաժեշտ ժամանակ (օրեր)	13	17	30	30	34	34	...	...
	Արտահանման ծախս (ԱՄՆ դոլար/կոնտեյներ)	1,665	1,731	1,746	1,165	1,600	1600	...	...
	Ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր (քանակ)	6	7	8	8	6	6	...	...
	Ներմուծման համար անհրաժեշտ ժամանակ (օրեր)	18	20	24	24	37	37	...	...
	Ներմուծման ծախսը (ԱՄՆ դոլար/կոնտեյներ)	2,045	2,096	2,111	1,465	1,880	1880	...	...
Պայմանագրերի կիրարկումը	**Տեղը**	**63**	**62**	**61**	**63**	**18**	**19**	...	...
	Ընթացակարգեր (քանակ)	49	49	49	50	50	50	50	50
	Ժամանակ (օրեր)	285	285	285	285	285	285.0	295	327
	Ծախս (պահանջի տոկոս)	19.0	19.0	19.0	19.0	19.0	19	19.0	19.0
Գործարարության փակումը	**Տեղը**	**54**	**49**	**49**	**47**	**40**	**39**	...	...
	Ժամանակ (տարիներ)	1.9	1.9	1.9	1.9	1.9	1.9	1.9	1.9
	Ծախս (գույքի տոկոս)	4	4	4	4	4	4.0	4	4
	Վերականգնման չափը (ցենտ)	40.6	41.8	41.8	41.7	41.7	40.7	39.3	39.3

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2011» ինդեքսի առանձին ցուցանիշների համեմատությունը (դիրքը աշխարհի 183 երկրների շարքում)

Աղյուսակ 3

Երկիրը/ ինդեքսի տեղը	Գործարարությամբ զբաղվելու դյուրինության ընդհանուր դիրքը	Գործարարության սկսելու (ընթացակարգ) դիրքը	Շինարարության թույլտվությունների ստացման դիրքը	Սեփականության գրանցման դիրքը	Վարկի ստացման դիրքը	Ներդրողների պաշտպանության դիրքը	Հարկերի վճարման դիրքը	Սահմանային առևտրի դյուրինության դիրքը	Պայմանագրերի կիրառելիության դիրքը	Սնանկության լուծման դիրքը
Վրաստան	12	8	7	2	15	20	61	35	41	105
Էստոնիա	17	37	24	13	32	59	30	4	50	70
Լիտվա	23	87	59	7	46	93	44	31	17	39
Լատվիա	24	53	79	57	6	59	59	16	14	80
Մակեդոնիա	38	5	136	69	46	20	33	66	65	116
Սլովակիա	41	68	56	9	15	109	122	99	150	29
Սլովենիա	42	28	63	97	116	20	80	56	60	38
Ղրղզստան	44	14	43	17	15	12	150	156	54	138
Հունգարիա	46	35	86	41	32	120	109	73	22	62
Հայաստան	48	22	78	5	46	93	159	82	63	54
Բուլղարիա	51	43	119	62	6	44	85	108	87	83
Ադրբեջան	54	15	160	10	46	20	103	177	27	88
Ռումինիա	56	44	84	92	15	44	151	47	54	102
Ղազախստան	59	47	147	28	72	44	39	181	36	48
Չեխիա	63	130	76	47	46	93	128	62	78	32
Մոնտենեգրո	66	51	161	116	32	28	139	34	135	47
Բելառուս	68	7	44	6	89	109	183	128	12	93
Լեհաստան	70	113	164	86	15	44	121	49	77	81
Ալբանիա	82	45	170	72	15	15	149	75	89	183
Խորվաթիա	84	56	132	110	65	132	42	98	47	89
Սերբիա	89	83	176	100	15	74	138	74	94	86
Մոլդովա	90	94	159	18	89	109	106	141	20	92
Բոսնիա և Հերց.	110	160	139	103	65	93	127	71	124	73
Կոսովո	119	163	173	65	32	173	41	130	155	31
Ռուսաստան	123	108	182	51	89	93	105	162	18	103
Տաջիկստան	139	136	178	87	168	59	165	178	40	64
Ուկրաինա	145	118	179	164	32	109	181	139	43	150
Ուզբեկստան	150	106	145	135	138	132	154	169	44	112